ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի սեպտեմբերի 10-14-ը Սերբիայի Հանրապետություն /Բելգրադ/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սերբիայի Հանրապետություն (Բելգրադ), 2024թ. սեպտեմբերի 10-14-ը

3.Հրավիրող կողմը՝

Եվրամիության վիճակագրական ծառայություն (Եվրոստատ)

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրների համար «Վիճակագրական առաջնորդություն տվյալների նոր էկոհամակարգում. հարաբերությունների ստեղծում և կառավարում տվյալների սեփականատերերի, պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների և օգտագործողների հետ» խորագրով Բարձր մակարդակի սեմինարին: Սեմինարը կազմակերպվել էր Եվրոստատի կողմից՝ Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) հետ համագործակցությամբ:

Սեմինարն ուղղված էր Ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրներից՝ ներկայացնելու վերջին զարգացումները Եվրոստատում, EFTA-ում և UNECE-ում, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրներում:

Սեմինարի հիմնական նպատակն էր քննարկել վարչական և մասնավոր տվյալների սեփականատերերի հետ հարաբերությունների կառավարման, ազգային վիճակագրական համակարգերի համակարգման, օգտագործողների հետ հարաբերությունների կառավարման, վիճակագրական հաղորդակցման, վիճակագրական համակարգերի և վիճակագրական ոլորտների գնահատումների խնդիրները և համագործակցության զարգացման հեռանկարները:

5.Քննարկված թեմաները՝

Վերջին զարգացումները Եվրոպական վիճակագրական համակարգում, EFTA-ում, UNECE-ում և Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրների ազգային վիճակագրական համակարգերում, Վարչական և մասնավոր տվյալների սեփականատերերի հետ հարաբերությունների կառավարում, Համակարգում ազգային վիճակագրական համակարգում, Օգտագործողների հետ հարաբերությունների կառավարում, Վիճակագրական հաղորդակցում և քաղաքականության համատեքստ, Վիճակագրական համակարգերի և վիճակագրական ոլորտների գնահատումներ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը սեմինարին ներկայացրեց հաշվետվություն ազգային վիճակագրական համակարգի ամենակարևոր վերջին զարգացումների վերաբերյալ և «Պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համակարգման գործիքները» խորագրով շնորհանդես:

«Պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համակարգման գործիքները» խորագրով շնորհանդեսի շրջանակում ներկայացվել են Արմստատի կողմից կիրառվող ազգային վիճակագրական համակարգի համակարգման գործիքները, մասնավորապես, ազգային վիճակագրական ծրագրերը (տարեկան, հնգամյա ծրագիր), ստանդարտների կարգավորումը, խորհրդատվական մարմինները (օգտագործողների հանրային խորհուրդ, խորհրդատվական խմբեր/ մեթոդաբանություն և սկզբունքներ), համագործակցությունը և գործընկերությունը (փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր, այլ արտադրողների ուսուցում), տարածման հարթակները (ԿԶՆ-ի համար Ազգային հաշվետվողականության հարթակ (https://sdg.armstat.am/am/), ԿԶՆ-ի ցուցանիշների միտումների գնահատման վահանակ (https://sdg.armstat.am/dashboard/)):

Արմստատի գործունեությունն ազգային վիճակագրական համակարգի համակարգման բնագավառում ուղղված է միասնական ստանդարտների, միջազգայնորեն համաձայնեցված հասկացությունների, սահմանումների, դասակարգումների և մեթոդների կիրառմանը, որի նպատակն է խուսափել աշխատանքների կրկնօրինակումից, նվազագույնի հասցնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը և դյուրին դարձնել տարբեր աղբյուրներից ստացված տվյալների ինտեգրումը՝ վիճակագրական ստանդարտների կիրառմամբ:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համագործակցության գործունեության շրջանակում հարց բարձրացվեց ժամանակակից և զարգացող վիճակագրական աշխատանքի համար անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ տեխնիկական օժանդակության անհրաժեշտության վերաբերյալ: Այս համատեքստում Հայաստանը կրկին դիմեց Եվրոստատին, EFTA-ին և UNECE-ին՝ աջակցություն ցուցաբերելու խնդրանքով հետևյալ մոդելների ներդրման ուղղությամբ. Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդել (GSIM) և Ընդհանուր վիճակագրական արտադրության ճարտարապետություն (CSPA):

Վիճակագրական համակարգերի և վիճակագրական ոլորտների գնահատումների ներքո նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումն իրականացնել 2025թ. մայիսին: Ներկայացնելով իր հարուստ փորձն արտաքին փորձագետների կողմից իրականացված գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանը նախկինում դիմել էր Եվրոստատին՝ հաջորդ փորձագիտական գնահատումն անցկացնելու խնդրանքով՝ նախորդը տեղի է ունեցել 2018թ.:

Խնդրո առարկա թեմայի շուրջ Արմստատում տեղի են ունեցել հետևյալ գնահատումները. 2014թ. Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատումը՝ Եվրոստատի փորձագետների կողմից (http://www.armstat.am/file/doc/99487953.pdf), 2018թ. Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումը՝ Եվրոստատի, UNECE-ի և EFTA-ի փորձագետների կողմից (https://www.armstat.am/file/doc/99517703.pdf):

Դրանից զատ Արմստատում Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել են ոլորտային գնահատումներ. 2014թ.՝ միգրացիայի վիճակագրություն (http://www.armstat.am/file/doc/99492303.pdf), 2016թ.՝ զբոսաշրջության վիճակագրություն (https://www.armstat.am/file/doc/99501893.pdf), 2017թ.՝ աշխատուժի հետազոտություն (https://www.armstat.am/file/doc/99507373.pdf), 2022թ.՝ շրջակա միջավայրի վիճակագրություն (https://armstat.am/file/doc/99535193.pdf):

Նաև իրականացվել են 2019թ. Հայաստանում պաշտոնական վիճակագրության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտային գնահատումը՝ UNECE-ի, Իտալիայի վիճակագրության, Սերբիայի վիճակագրության և Նորվեգիայի վիճակագրության փորձագետների կողմից (https://www.armstat.am/file/doc/99517668.pdf) և 2022թ. Հայաստանում Վիճակագրական կազմակերպությունների ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ներդրման ոլորտային գնահատումը՝ UNECE-ի և Իտալիայի վիճակագրության ու Հունգարիայի վիճակագրության փորձագետների կողմից (https://armstat.am/file/doc/99533528.pdf):

EFTA-ի ներկայացուցչի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց մասնավոր հատվածի ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրության ոլորտում Արմստատին օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու վերջին զարգացումներին Եվրոպական Վիճակագրական Համակարգում, քննարկելու վարչական և մասնավոր տվյալների սեփականատերերի հետ հարաբերությունների կառավարումը, ազգային վիճակագրական համակարգերի համակարգման գործիքները, օգտագործողների հետ հարաբերությունների կառավարումը, վիճակագրական հաղորդակցումը, Եվրոստատի, EFTA-ի և UNECE-ի հետ համագործակցության գործունեությունը, վիճակագրական համակարգերի և վիճակագրական ոլորտների գնահատումները (հատկապես, որ 2025թ. նախատեսվում է Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության հաջորդ փորձագիտական գնահատումը), ինչպես նաև կիսվելու փորձով և քննարկելու գործողություններն՝ ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա կատարելագործմանը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը – Հայաստանի Հանրապետության Վարչապետի 16.08.24թ. թիվ N 752 - Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

1. Գործուղման վայրը - Սերբիայի Հանրապետություն (Բելգրադ)

2. Գործուղման ժամկետները՝ 2024թ. սեպտեմբերի 10-14-ը

3. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - Եվրամիության վիճակագրական ծառայություն (Եվրոստատ)

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

/ Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան